

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Փեշիկեան Հ. Եղիա. — Յարութիւն՝ Գողգոթայի ճամբով 145

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Թորոսեան Հ. Յ. — Հ. Արսէն Սիւքրի (Գրական աշխատութիւնները) 148

Տաղ Յարութեան (անուշ) 153

Այտաւազդ Եպիսկ. — Զեռագիր հին աւետարանի մը հանդիսաւոր բեմադրութիւնը 154

Գ. Արք. Արսլանեան. — Պատարկներ լուսածիր շաքարացեալ վանքերէն 166

ԿՐԹԱԿԱՆ

Թովմասեան Հ. Թադեոս. — Քրիստոնէական դատարարականութիւնը արդիական ըմբռնումներու հանդէպ 158

ԳՐԱԿԱՆ

Յովնանեան Հ. Վ. — Խաչին դիմաց 163

Արսէն Երկար. — Նուիրում 164

Բ. Պ. — Գարունս 164

Փեշիկեան Հ. Եղիա. — Իմ վաղամեռիկ հոգեկից Հ. Պողոս Քիլիզեանի յիշատակին 165

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Սորկուճ Կ. Սոփիա. — «Man's Mortality» — «Մարդիկ մահկանացու են» (գրեց՝ Մ. Աբլէն) 179

Երեմեան Հ. Սիմոն. — «Հայ և արաբ գեղարուեստի յարաբերութիւնը» — «Վիշապը հայկական գորգերուն մէջ» (Յ. Քիւրտեան) 181

Անարեան Հայկ. — «Գէպ ի կախաղան» (Թափառական) 182

ԳԻՏԱԿԱՆ

Գաշիկեան Յակոբ. — Նիւթին կազմութիւնը 169

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Գեօրգ. — Գէօր ֆոն Բերլինգըն (թրգ. Յակոբ-Գրիգոր) 174

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Փ. Հ. Ե. — Հանդէս Հանգիսից 187

ԱՅԼԵԻԱՅԻՔ

Սաղրգեան Արմենակ. — Բաց նամակ առ Պ. Յ. Քիւրտեան 178

Բեղիկիկեան. — Փաղաքական տեսութիւն 190

ՄԱՀԱՋԴ

Հոգեկից մը. — Հանգիստ հոգւոյ Հ. Պօղոս Քիլիզեանի 192

Paitchikian P. E. — Résurrection par la voie de Golgotha 145

ACADEMIE ARMENIENNE

Thorossian P. G. — P. Arsène Soukri 148

Ode à la Résurrection 153

Mgr. Ardarast. — Un évangéliste (Code du XVII^e siècle) 154

Mgr. K. Arslanian. — Mémoires des couvents arméniens 166

PÉDAGOGIE

Tomadjan P. T. — La Pédagogie chrétienne d'après la mentalité moderne 158

LITTÉRATURE

Hovhannessian P. V. — Juxta Cru- cem (poésie) 163

Arsène Yergat. — Offrande (poésie). 164

P. B. — Mon printemps (poésie) . 164

RECENSION

Sophie G. Sorgoudje. — «Man's mor- tality» (par M. Arlen) 179

Erémian P. S. — «L'art Arméno - Arabe» (relation) — «Le Dragon dans les tapis arméniens» (par H. Kurdian) . 181

Aharonian H. — «Vers le gibet» (par Thaparagan) 182

SCIENCE

Davidian Agob. — La constitution de la matière 169

THEATRE

Goethe. — Gœtz de Berlichingen (trad. par Hagop-Krikor) 174

PRESSE ARMENIENNE

P. P. E. — Revue des Revues. 187

DIVERS

Mr. A. Sakizian à Mr. H. Kurdian. 178

Pellegrino. — Vie internationale . 190

NECROLOGIE

Un Confrère. — † P. Paul Kilizian. 192

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱԴՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843-1933

ՀԱՏ. ՂԱ. ՌՅԶԲ-ՌՅԶԳ.

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԵՐՆԵ՝ ԳՈՂԳՈԹԵՅԻ ՀԱՄԱՐԿ

ԱՄՏԱՌԻՆ՝ աշխարհիս չորս հոգւերուն ցիրուցան պանդուխտ հայ ժողովուրդին ուղղեցինք մեր սրտին ջերմին մաղթանքը եւ անոր հետ սիրալուր աւետիսը Քրիստոսի մահուան եւ յարութեան տաճարներէն դարադարձին: Եւ անա դարերու ակնկալութեան լուսմին եւ մարդկութեան աստուածացուսի մեծ խորհուրդին շուրջ երկնազարամայ հանդիսաւոր տօնախմբութեան ձայներն են որ կը հնչեն ամենուրեք: Ու կը բացուին արդարութեան դռները Աստուծոյ գեթութեան եւ բարութեան հոսանքներովն ողորուն, եւ բարի հաւատացեալներ տառապող մարդկութեան ամբաւ կարօտութեամբ կը դիմեն, կը լուսցուն, կը սրբուն, ու լուսազգեստ պատմեանով կը սպասեն Յարութեան արշալոյսին, ինչպէս երբեմն մեր պաշտելի Նահատակները Շաւարշանի դաշտերուն վրայ, խորհրդաւոր գիշերուան մը հսկովին մէջ սրբութեան աւազանին եւ Սմանին մահուան Ս. Սեդանին շուրջ՝ վաղորդայնի կարմիր ծովէն անցնելով դէպ ի աւետեաց

ԲԱԶՄ. ԱՊՐԻԼ, 1933

մեղրաբուխ երկիրը չուերու, ինչ որ Ս. Եղիշէի խնկեալ ու պաշտելի քնարական էջերով երգուած է անմահօրէն:

Անա ծովի ու ցամաքի վրայ խրտուժ մը, եռուզեռ մը որ հետզհետէ կ'աճի, կը բարդուի, կ'երկնայնայ հորիզոնէ հորիզոն, երկրէ երկիր. եւ ո՞րքան տարբեր քաղաքական մուծ ու մալլ շարժումներէն՝ որոնք շարունակ մարդկութեան սիրտը կը տագնապեն:

Զայն կու տան բարի հոգիներ, կամոգին սիրովն իրենց պաշտած Քրիստոսին՝ որուն անգին արիւնի գինն են եւ անմահութեան ժառանգը, ուխտաւորներ հաւատացեալ որ նորածին գարնան կը չուեն երամովն, հաւատքի լապտերներով առաջնորդուած, աղօթիկեր շրթունքներով, խունկ ու սէր, համբոյր եւ արցունք ծրարած առատօրէն իրենց աղքատիկ սրտերուն մէջ, ու կը դիմեն դէպ ի սուրբ քաղաքը, ամբիծ հաւատքովն 1900 տարեկան քրիստոնէութեան: Երբեմնի հազարաւոր ու բիւրաւոր խաչակիր բերաններու աղաղակն է որ

դարձեալ կ'որոտայ կարօտովը կոյս ու լոյս
Գերեզմանին, եւ այս անգամ — ո՛վ զար-
մանք — խռովքի եւ տառապանքի աշխարհի
մէջ, անգէն ու անկուր կարելի է կատա-
րել իր ուխտը հոն՝ ուր կարծես դեռ կ'ե-
ռայ արիւնը Ամմանին:

Եւ եթէ տխուր ճակատագրի վիճակ-
ուած մեր եղբայրները զնդաններու մէջ
ալ կամիլ մ'արցունք ու փշուր մը խունկ
գիտեն նուիրագործել առկայծ լապտերի
մը լոյսով՝ Գերեզմանին վրայ Յիսուսի՝ զոր
կը պաշտեն հոգւով, գերեզմանին վրայ
Վարդանի որուն սիրով կ'այրին, գերեզ-
մանին վրայ իրենց ու մեր նահատակ ծը-
նողներուն, քոյրերուն եւ եղբայրներուն,
ահ, միմէ պիտի գտնուի՞ մէկ հայ, աշ-
խարհի ո՛ր անկիւնն ալ ըլլայ ան, որ մոռ-
նայ իր հայրերու պաշտած Քրիստոսը՝
անոր 1900ամեայ մահասարսուռ յաղթա-
նակին մէջ, երբ արդէն մեր ցեղի ոգին,
քրիստոնեայ ու հաւատացեալ, մեր ապրի-
ւեան բիւրաւոր նահատակներով փարելի՝
կ'երգէ իր մուսաներով, կ'երգէ երգը ա-
նոյշ, երգը գարնան, երգը ծաղիկներու եւ
քոյրերու, երգը լուսազարդ եւ յուսալից
յարուծեան:

«Ծառերն ամենայն ծաղիկն
Հոտըն գայր գարնանային
Լոճսն եւնէ Հսոցն Զսպիւն»:

Եւ իսկապէս ի՞նչ անոյշ է 1900 տարի
վերջ ալ, խռովայոյզ եւ ոգեսպառ օրե-
րու մէջ դարձեալ տօնել Զատիկը՝ տնե-
չալի անցքը զոր կ'ընէ Աստուծամարդը
երկրէս երկինք, մահէն դէպ ի կեանք եւ
անմահութիւն, երթալ խունկերով ու ա-
նուշահոտութեամբ սուրբ Գերեզմանին քով՝
մոնշաղին, երկչոտ, գաղտագողի, յոյսերով
դիւրաշարժ, ու տեսնել լոյսի եւ երանու-
թեան մէջ արշալոյսը յարուծեան՝ կեանքով
եւ երջանկութեամբ պատարուն. ու դառ-
նալ նոր կեանքի եւ երգել մեր խիկարի
հոգեբեզու շունչով:

«Տէր տաքի գիւղաղաղաբիւն
Իշ աշխարհի ուրախութիւն,

Հոտըն կոչ գայ ամենահոշիւն
Յորձաւ Հսոցն Զսպիւն Գսթը»:

Եւ Հայոց Զատիկը ամբողջ քրիստո-
նէութեան Զատիկն է, մարտ — ապրիլի
ծաղիկներով ծիծաղլոտ, բարկ արեգակին
ծագումով, ամպերու եւ երկնքի գոռու-
մով՝ երբ ողորմութեան ցօղը կը ցօղէ, երբ

«Աղբերակոշերքը յորդորին,
Ծառ ու ձրդերըն գարդարին...
Պիւղպիւղ դռնիւն առաւօտուն
Երկիր դարձեր վարդին հոտուն»...:

Եւ ահա ի՞նչ սխրալի տեսիլ, հաւա-
տացեալ աշխարհի չուն, հաւատքի ջանով
վառ, ուխտի կարօտով հաւաքուած Ս.
Յարութեան տաճարին մէջ. այդ բարե-
պաշտ տեսարանն է որ կը մարմնանայ
խիկարի երգին մէջ:

«Երոշադեմ դարձրեմ այսօր,
Աշխարհս ի հոն երբան յոշով.
Սուրբ Յարութիւն լըցվի լուսով
Յորձաւ Հսոցն Զսպիւն Գսթը...»:

Եւ հոն են անխտիր արեւելքէն ու ա-
րեւմուտքէն, ամէն ազգէ, ամէն լեզուէ,
ամէն ժողովուրդէ, իւրաքանչիւրն իր խուն-
կով ու իր զոհաբերութիւններով, իր ծա-
ղիկներով ու բարբառով՝ բայց նոյն հաւատ-
քին փարած ու նոյն յոյսերով օրօրուն:

«Հայ ու Հոռմըն խաչապաշտ
Ամեն բոսիկ ու գիւղիւրաց
Ուրախանալ յոշոյն դիմաց
Յորձաւ Հսոցն Զսպիւն Գսթը»:

Բայց ե՞րբ կու գար Հայոց Զատիկը...
«Ե՛րբ է այս տարի մեր Զատիկը...»:

* * *

Անծանօթ չէ ձայնն ու պատգամը այ-
լախօսիկ բայց հայասիրտ մեր սիրելւային —
Աղանուրի — որ շուրջ կէս դար առաջ այս
օտար ափերուն վրայ, կարծես իր ցեղի
հեռաւոր ու վտարանդի բեկորներէն հար-

ցապնդուած հայկական Զատիկի գալուստի
մասին՝ Գողգոթայի եւ արիւնի տեսիլներ
կը նշմարէր մեր պաշտած Աստուծոյ խա-
չելութեամբ, եւ Անոր աստուածային
մահափոտ հետքերուն վրայ եւ տիպարին
հանգոյն՝ մեր ամբողջ ցեղը խոշտանգուած
ու խաչուած:

Բայց արիւնի եւ մահուան սարսուռնե-
րէն անդին, մարգարէական շունչով մը,
քրիստոսական հօգօր ու փառապանծ յա-
րութեան քով իր յաղթական կոչը կ'ուղ-
ղէր — «Հայաստա՛ն, քու Զատիկդ ալ
մօտ է»:

Այնքան մօտ, այո՛, որ Վարուժան
կ'երդնուր, ու կը տեսնէր յարութիւնը
մեռելներուն, կը տեսնէր արեան ծովը
որուն մէջ ինք ալ պիտի զգենուր իր փառ-
քի ծիրանին նահատակի:

«Մեր Մեռելները բոլոր
Միահամուռ ուտումով
Պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց,
Ու անհաւեր հեռո՛ւն, հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գարնանին
Արշալոյսի մ'Արշալոյսի մը՝ որուն
(Հաւատացէ՛ր ինձ, Մայրեր)
Ես ՈՏԵԱԶԱՅԵԼ Կ'ԱՌԵՄ...»:

Մօտ էր եւ եկաւ:

Զատիկը, անցքը՝ Կարմիր ծովէն՝ իս-
րայէլի համար. Հայկական Զատիկն ալ
կարմիր ծովէ մը՝ որ Գողգոթայի գոյնն եւ
տեսարանն ունէր:

Ա՛խ, երբ լսէք հայրենի գաւառներու
անկիւններէն սրտայոյզ կոչը մեր սիրելի

եղբայրներուն, մեր պաշտելի Նահատակ-
ներու վերապրող մասունքներուն թէ «Ե՛րբ
է մեր Զատիկը», լսեցուցէք անոնց խորհրդ-
դաւոր երգը մեր հոգեխօսիկ երգչին, որ
Սիոնի պարիսպներէն երգէ իր հովուա-
կան սրինգով, եւ Ս. Յարութեան տաճարի
խունկը բուրէ:

«Ծառերն ամենայն ծաղիկն
Հոտըն գայր գարնանային
Լոճսն եւնէ Հսոցն Զսպիւն»:

Ամենուրեք ուր խաչ ելաւ հաւատացեալ
գաւակ մը հայութեան, ամենուրեք Գող-
գոթա դարձաւ անմահութեան բուրուժով:

«Ի՛շ ուր խաչ մ'ի՛ր բազուկները կը բաճաջ
Յարդահարուած չե՞ միքե՛ մահն հաւատքին»:

Այդպէս ըմբռնած է Քրիստոնէութիւնը՝
կեանքը մահէն ծնած, բեղուն մահէն պաշ-
տելի Աստուծոյն: Այդպէս է մեր կեանքն
ալ մեր Նահատակներու մահէն. եւ «Մար-
տիրոսներու արիւնը՝ սերմը քրիստոնեանե-
րու»:

Հրէաստանի Գողգոթային քով կը ծխէ
Հայ Գողգոթան ալ: Ահա մեր Զատիկը:
Մեր Անծանօթ Զինուորը՝ մեր բիւրաւոր
նին ու նոր Նահատակներն են, որոնց փառք
կ'երգենք Յարուցեալին հետ, քանի որ
խաչուած առնձներ Աստուծոյ, իրեն հետ
կը յառնեն, նոյն յարութեան լոյսերով
ողորուն եւ փայլուն:

Եւ ո՞ր հայը պիտի չուզէ այդ Յարութեան
յուսով բերկրիլ ու զովացնել իր սիրտը այդ
աղբիւրէն անմահութեան:

Հ. ԵՂՄ. ՓԷՉԻԿԵԱՆ

